գաւոր և անբուժելի վէրքեր և սպիներ գոյացնելու... Մենք ուշադրութիւն ենք պահանջում այս ցաւալի իրողութեան մասին այն պարոններից՝ որոնք յանձն են առել զեկավար և առաջնորդ լինելու այսպիսի անտէր և անօգնական ժողովրդի...

Իմանում ենք, որ նոյն տեղի վրացի իշխանները մի խնդիր են պատրաստել տէրութեանը ներկայացնելու, որի մէջ յիշել են թէ իբր իրանք հայոց եկեղեցու գաթումը արդէն կառուցել են ուսումնարան (որ ոչ թէ վրաց այլ հայոց կառուցված է, ուրեմն և սեպհականութիւն այս վերջիններիս. վրացիք սեպհական ուսումնարան չունեն կառուցված), և խնդրում են այժմ մի ուսուցիչ. և նրա վրա իրանք ստորագրելով, ստորագրել են տուել և նոյն տեղի հայերին, որ ամենևին չեն գիտացել այն խնդիրքի բովանդակութիւնը... Ահա այսպէս են ընթանում մեր ազգային գործերը, պ. խմբագիր, թէև ամեն մի անկիւնում պաշտօններով և իրաւունքներով մարդիկ ունենք։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք մի փոքրիկ, ութ երեսից բաղկացած բրօշիւր հայերէն լեզուով, որ տպված է Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանցի տպարանում։ Բրօշիւրի վերնագիրն է. «Սուրբ Էջմիածնի զանգակը» և ստորագրված է Թորոս Ձիհանկիրեանց։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրներից իմացանք, որ ալէքսանդրապոլցի երեք պատգամաւորներից որոնք եկած էին Էջմիածին Կաթողիկոսին ներկայանալու համար, նրանցից մի հողի միայն իրաւունք ստացաւ ներկայանալ վեհափառին, իսկ երեքին միասին ներկայանալը Մանկունին յարմար չը համարեց։ Կաթողիկոսին ներկայացողը, ասում են բժիշկ է եղել»

—

Լսում ենք որ Թիֆլիսի մեր հայ նշանաւոր բժշկներից մին կանչված է Էջմիածին, Կաթողիկոսի անյուսալի հիւանդութեան պատճառով։

—

Ցիշեցնում ենք Թիֆլիսի հայոց հասարակութեանը որ այսօր, ուրբաթ օր, պ. Ա. Թոխմախեան կրկնելու է իր դասախօսութիւնը Արծրունու թատրոնում։

—

ՍԱՐԱՏՕՎԻՑ մեզ գրում են. «Այս տարի Սարատովի և Սամարայի նահանգներում շատ առատ հունձ է սպասվում։ Այստեղ շատ յաճախ կրկնվում են անձնասպանութիւններ։ Տեղական պօլիցիան խիստ հսկողութիւն է անում կարգ պահպանելու վրա, որպէս զի ուրիշ տեղ եղած հակահրէական շարժումներ այստեղ չը պատահեն։ Տեղիս զումայում հարց է յարուցված կոմս Լորիս-Մէլիքովին ցաւակցութիւն յայտնել նրա հրաժարականի մասին և առաջարկել նրան Սարատովի պատուաւոր քաղաքացու կոչումը»

—

Ղուբայից, պ. Յովհաննէս Տէր-Յակոբեանց խնդրում է մեզ յայտնել որ «Մշակի» 82 համարի մէջ տպված Ղուբայի նուիրատուների ցուցակի մէջ մտան հետևեալ սխալները. Խաչակ Կուզնեցովի և Յովհաննէս Տէր-Յակոբեանցի անունները տպված էին, բայց յիշված չէր թէ որքան գումար են նուիրել այդ պարոնները։ Այժմ յայտնում ենք որ առաջին պարոնը նուիրեց 1 ռուբլի, իսկ երկրորդը 3 ռուբլի։

—

Հարաւային Ռուսաստանի ռուս լրագիրները հաղորդում են որ Օդէսայում, Կիեվում և ուրիշ քաղաքներում հակահրէական անկարգութիւններից յետոյ կալանաւորվածներից շատերին պօլիցիան բ օ զ գ օ վ էր ծեծում ու արձակում։ Ասում են որ մինչև անգամ մի քանի կանայք ենթարկվեցան այդ պատժին։

—

Այժմ լսում ենք որ Թիֆլիսի օրիորդական ինստիտուտում և Ս. Նինայի իգական դպրոցում վանված փողը ոչ թէ 120,000 է, այլ հասնում է 150,000 ռուբլի գումարի։ Լսում ենք նոյնպէս, որ իշխան Սիդամօն Էրիստովի վրա, որ գանձապահ էր այդ երկու դպրոցներում, արդէն դատաստանական քննութիւն է նշանակված։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

—

Սերբիայի իշխան Միլան, ինչպէս հաղորդում են լրագիրները, այժմ ճանապարհորդում է Եւրոպայի մէջ, որպէս զի համոզի մի քանի պետութիւններին չընդդիմանալ սերբիական իշխանութիւնը թագաւորութիւն դարձնելու գործին։ Իշխան Միլան այցելեց Աւստրիայի, Գերմանիայի և Ռուսաստանի մայրաքաղաքները և ամեն տեղ նրան մեծ պատուով ընդունեցին։ Այժմ իշխանը Ս. Պետերբուրգի մէջ է։

Իշխան Միլանի ընդունելութեան մասին Բերլինի մէջ ստացված են հետևեալ տեղեկութիւնները։ Իշխան Միլանին երկաթուղու կայարանի մօտ Բերլինի մէջ ընդունեցին նահանգապետը և կայսրի տղիւատանները, որոնք առաջնորդեցին նրան պալատը։ Յունվի 2-ին իշխանին այցելեց կայսր Վիլհելմ և այդ այցելութիւնը բաւական երկար ժամանակ տևեց։ Միւս օրը պալատի մէջ ի պատիւ իշխան Միլանի մի ճաշկերոյթ կազմվեցաւ, որին ներկայ էին թագաժառանգը, կայսերական տան անդամները, բազմաթիւ գեներալներ և մինիստրներ։

Բէլգրադից հաղորդում են, որ իշխան Միլան կը վերադառնայ իր մայրաքաղաքը մինչև օգոստոսի 2, երբ լինում է սերբիական ժողովրդական ածը։ Լրագիրները հաղորդում են, որ նա նորից կը ճանապարհորդէ Եւրոպայի մէջ իր ամուսնի հետ, բայց առաջ իրան Սերբիայի թագաւոր կը յայտնի, եթէ կը ստանայ Աւստրիայի, Գերմանիայի և Ռուսաստանի համաձայնութիւնը։

Ռուսաց լրագիրները յայտնում են հետևեալ մտքերը Սերբիայի մասին։ Իշխան Միլան առիթ չունի կասկածել Ռուսաստանի համակրութիւնը և նրա դիպլոմատիական օգնութիւնը Սերբիան թագաւորութիւն յայտնելու գործի մէջ։ Աւստրօ-Ունգարիայի և Գերմանիայի համաձայնութենից յետոյ բոլոր դժուարութիւնները Սերբիան թագաւորութիւն յայտնելու համար հեռացրած են։ Սերբիայի կառավարութեան և ժողովրդի ցանկութիւնը՝ պահել իրանց ազգային անկախութիւնը թագաւորական բարձր տիտղոսով, շատ հասկանալի է, մանաւանդ որ այդ տիտղոսը համապատասխանում է սերբիական ժողովրդի դրութեանը և նրա պատմական ցանկալի գաղափարներին։ Սերբիական վաղեմի հզօր թագաւորութիւնը, որ դարեւոր արիւնահեղ պատերազմի օգնութեամբ նորից ձեռք է բերել իր կատարեալ անկախութիւնը չէ կարող Ռումինիայից ստոր մնալ, չէ կարող իշխանութիւն լինել, քանի որ Ռումինիան թագաւորութիւն է յայտնված։ Իշխան Միլանի կատարելապէս օրինաւոր ցանկութիւնը անկասկած բաւականութիւն կը ստանայ և Սերբիան կը բռնի իր տեղը Եւրոպայի սլաւեանական անկախ պետութիւնների շարքում։

Այդ գործը աւելի դրական նշանակութիւն ունի Աւստրօ-Ունգարիայի համար, որ տիրում է հին սերբիական մի քանի երկիրների վրա, որոնց ազգաբնակութիւնը չէ ծածկում իր համակրութիւնը դէպի իր նախկին հայրենիքը։ Բայց Աւստրիայի ազդեցութիւնը Սերբիայի մէջ այժմ գերակշռող է և նա մի քանի զիջումներով կամենում է այդ ազդեցութիւնը աւելի էլ սաստկացնել։ Սերբիան թագաւորութիւն դառնալուց յետոյ նրա յարաբերութիւնները Աւստրիայի հետ աւելի էլ բարեկամական կը լինեն։

—

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական սենատը մերժեց պատգամաւորների ժողովից հաստատված Բարդուի ընտրողական օրինագիծը։ Գամբետտայի բազմաթիւ կուսակիցները չէին սպասում այդպիսի կատարեալ անաջողութեանը և կարծում էին, որ սենատը գուցէ կը փոփոխէ օրինագծի առանձին յօդուածները, բայց ամբողջապէս չի մերժի։ Հանրապետական լրագիրների յօդուածները չեն համապատասխանում այն սպառնալիքներին, որ նրանք անում էին սենատին, եթէ նա ընդդիմադրէր պատգամաւորների ժողովի վճռին։ „République Française“ լրագիրը խոստովանում է, որ Գամբետտա և նրա կուսակցութիւնը կատարելապէս յաղթված են։ Այդ լրագիրը կարծիք է յայտնում, որ այդ գործի անաջողութիւնը կարող է ապագայում նշանաւոր դժուարութիւններ պատճառել և որ ընտրողական նոր ձևի պաշտպան հանրապետական կուսակցութիւնը կը հասնի իր նպատակին, եթէ հարկաւոր լինի մինչև անգամ սենատին վնասել։ Պատգամաւորների ապագայ ընտրութիւնները կը վճռեն ոչ թէ միայն Բարդուի օրինագծի, այլ և սենատի վիճակը, որովհետև, եթէ պատգամաւորների նոր ժողովը թշնամաբար վերաբերվի սենատի միջոցին քուէարկութեանը, ուրեմն սենատը յաղթված կը լինի և կերևայ, որ ժողովուրդը պախարակում է նրա բռնած ընթացքը։ Իսկապէս դժուար չէ նկատել, որ „République Française“ լրագրի դատողութիւնները հակասում են վիճելի հարցի գործնական դրութեանը։ Սենատը նոյն իսկ այն պատճառով մերժեց պատգամաւորների ժողովի վճիռը, որպէս զի միջոց տայ ընտրողներին յայտնել իրանց կարծիքը ընտրողական ձևի մասին։ Գոնեա այդ պատճառաբանութիւնը դլխաւոր տեղ էր բռնում սենատի մասնաժողովի զեկուցման մէջ։ Ժողովուրդը կարող է հաւանութիւն տալ ընտրողական այս կամ այն ձևին, պատգամաւոր ընտրելով այս կամ այն ձևի ընտրութիւնների կուսակցին։ Բայց ինչպիսի ընտրութիւններ էլ պատահեն, ֆրանսիական սենատը այնուամենայնիւ կը մնայ։

Այդ հարցին աւելի մեծ նշանակութիւն են տալիս այն հանրապետականները, որոնք միշտ թշնամի են եղած սենատի հիմնելուն և որոնք այժմ կամենում են օգուտ քաղել Գամբետտայի կուսակցութեան տրամադրութենից սենատի դոյութեան մասին հին վէճը բարձրացնելու համար։ Արմատական կուսակցութեան „Rappel“ լրագիրը արդէն մի յօդուած է տպել „սենատի կոչուսաը“ վերնագրով, որի բովանդակութեան մասին կարելի է դատել վերնագրից։ Բայց Ֆրանսիական ժողովուրդը հարցրու թէ յանձն կառնի կասկածանքի ենթարկել ներկայումս գոյութիւն ունեցող որ և է հիմնարկութիւն և այնպիսի հարցեր բարձրացնել, որոնք կարող են կասկածելի դարձնել 1875 թուականի սահմանադրութեան գործադրութիւնը։ „Rappel“ լրագրի ցանկացած փորձերը կարող են շահաւէտ լինել հանրապետութեան թշնամի բօնապարտեաններին և կղերականների համար, որոնք մերժում են այն օրէնքների հեղինակութիւնը, որոնցով որոշվում է Ֆրանսիայի պետական այժմեան կազմակերպութիւնը։

—

ԱՆԳԼԻԱ

—

Կանանց կալուածական միութեան անդամ և հրապարակախօս օրիորդ Աննա Պարնել աւելի արմատական մտքեր է յայտնում գանազան ժողովների մէջ, քան թէ նրա եղբայրը և մի և նոյն ժամանակ, իբրև կին, օգուտ է քաղում պօլիցիայի ներողամտութենից։ Նորերումս օրիորդ Պարնել մի ճառ արտասանեց Ցուլի մէջ։ Նրան շրջապատել էր կանանց հասարակութիւնը, իսկ տղամարդիկ դուրսը այնքան էին հաւաքվել, որ անցնելու տեղ չը կար։ Ձիաւոր ժանդարմները ի զուր տեղ աշխատում էին հեռացնել տղամարդկերանցը։ Նրանց մտրակի հարուածներով դուրս արին։ Այնուհետև օրիորդ Պարնել իրան լսող կանանց հետ մտաւ եկեղեցու բակը, որտեղ շարունակվեցաւ նրանց ժողովը։ Հրապարակախօս օրիորդը գլխաւորապէս յարձակվում էր պօլիցիայի վրա, զգուշացնելով իրան լսող կանանցը պօլիցիայի շողոքորթող խարդախութենից։ Բացի այդ օրիորդը աւելացրեց, որ Ֆօրստեր գաղտնի հրահանգներով պատուիրել է պօլիցիային ձեռք բերել ազգասէրների հաւատարմութիւնը։

Այս ընդհանուր ատելութիւնը դէպի պօլիցիան մի նոր շրջան է կազմում իրլանդական անկարգութիւնների պատմութեան մէջ։ Դեռ նորերումս կալուածական միութիւնը հրամայում էր իր գործակալներին զանազանել դատաստանական վճիռները կատարողներին հասարակ պօլիցիականներից։ Առաջինները չարագործներ էին համարվում, երկրորդները նրանց ակամայ գործիքներ։ Իսկ այժմ բոլորն էլ միատեսակ ատելի են դարձել իրլանդացիների համար, այնպէս որ պօլիցիական գործակատարի հետ խօսելը վտանգաւոր է դարձել։ Զինուորները դեռ ևս պահպանել են իրանց հեղինակութիւնը ամբոխի մէջ, մինչդեռ պօլիցիականները կատարելապէս քարկոծվում են ժողովրդից։ Քանի որ զինուորներն էլ սկսել են մասնակցել ֆերմերներին արտաքսելու գործին, նրանք էլ կորցնում են իրանց հեղինակութիւնը։

Որովհետև լուր տարածվեցաւ, թէ Ցուլի մէջ կալանաւորված է մի յարգված ֆերմեր, այնտեղ մի քանի հազար մարդ հաւաքվեցաւ։ Ամբոխը կտրեց հեռագրական թելերը, փչացրեց ճանապարհները և կամուրջները։ Այդ կոմսութեան մէջ շատ զօրքեր ուղարկվեցան։ Մի քանի այլ կոմսութիւնների մէջ պատերազմական դրութիւն է յայտնված։

Իրլանդիայի նահանգներից մէկի մէջ նոյեմբերումս մի ազգաբարութիւն տարածվեցաւ, որից երևում է Իրլանդիայի այժմեան տրամադրութիւնը։ Այդ ազգաբարութիւնը սպառնում է մահով մի կենեդիին և նրա մէջ ի միջի այլոց ասված է. „Այդպիսի անպիտաններին պէտք է կոտորել, եթէ մինչև անգամ նրանց պաշտպանէին թագուհու բոլոր զօրքերը։ Մենք այլ ևս չենք համբերի կալուածատէրերի բռնաւորութիւնը, որոնց վերջին ժամը արդէն հասել է։ Կորչեն կալուածատէրերը։ Հողը պատկանում է իրլանդական ժողովրդին, որ նրան իր քրտինքով նրա համար չէ ջրում, որ այդ հողի պտուղներով ձրիակերները ապրեն։ Կորչեն բռնաւորները։“

—

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական կիսապաշտօնական լրագիրները հերքում են այն լուրը, իբր թէ իշ-

խան Բիսմարկի առողջութիւնը լաւանում է։ Այդ լրագիրների տեղեկութիւնների համեմատ, թէպէտ իշխան Բիսմարկի հիւանդութիւնը չէ սասկանում, բայց նա անկարող է ընդունել սովորական զեկուցումները և անկողնի մէջ պարապում է ամենանհրաժեշտ գործերով։

Կարլսրուէի մէջ յունիսի 7-ին բացվեցաւ ուսուցչական մի մեծ ժողով, որին ներկայ էր հասարակութեան մեծամասնութիւնը։ Ժողովին մասնակցում էին 2,000 աւելի ուսուցիչներ և վարժուհիներ, որոնք եկել են Գերմանիայի, Աւստրիայի և Շվէյցարիայի զանազան տեղերից։ Փարիզից Ֆրանսիական կառավարութեան յանձնարարութեամբ եկել էր ժողովրդական—ուսումնարանների տեսուչը։ Ժողովին ներկայ գտնվեցաւ Բադենի դուքսը։

Բերլինի մէջ լուր է տարածված, որ այս ամառ գերմանական կայսրը կը տեսնվի աւստրիական կայսրի հետ Բադենի մէջ քաղաքական նպատակով, որ դեռ յայտնի չէ։ Բայլեստագին ներկայացվեցաւ այն մասնաժողովի զեկուցումը, որ քննում էր ժողովրդական խնդրագիրները քաղաքական պարտադիր ամուսնութեան դէմ։ Այդ հարցի քննութեան ժամանակ բայլեստագի նիստերը երևի չափազանց աղմկալի կը լինեն։

Գերմանական կառավարութիւնը ներկայումս բանակցում է Բրեմեն քաղաքի վարչութեան հետ, պահանջելով, որ նաւահանգստի մէջ մասնաւոր բնակարաններ և մասնաւոր արգիւնաբերական հիմնարկութիւններ չը լինեն։ Բրեմենի քաղաքային խորհուրդը կարծիք է յայտնում, որ այդ պահանջը անիրագործելի է, քանի որ նաւահանգստի մէջ բազմաթիւ շինութիւններ կան։ Քաղաքային խորհուրդն էլ այնպիսի պահանջներ է առաջարկում, որոնց գերմանական կառավարութիւնը աշխատում է սահմանափակել։

Իշխան Բիսմարկի առաջարկութիւնը գերմանական „ոնտեսական խորհուրդ“ հիմնելու համար կրեդիտ տալու մասին բայլեստագը մերժեց ձայների մեծամասնութեամբ։ Առաջարկութեան դէմ քուէարկող ազգայնապատուիրակների հետ միացան առաջադէմները և կենտրոնական կուսակցութեան մեծամասնութիւնը։ Կառավարութեան կողմից խօսող Բէօտտիխեր այնպիսի դժուար դրութեան մէջ դրվեցաւ ընդդիմադրողներից, որ ստիպված էր խոստովանել նրանց ասածների ճշմարտութիւնը։ Այդ օր խօսեց նոյնպէս և Բիսմարկ, որ ասաց, թէ այդ օրինագծով իր սոփորութեան համեմատ իշխան Բիսմարկ ձեռնամուխ է լինում միացեալ պետութեան սկզբունքին։ Բայլեստագի այդ օրվայ նիստին ներկայ էր իշխան Միլան։

Նոյն օրը կայսր Վիլհելմին ներկայացաւ Սերբիայի նոր դեսպան, գնդապետ Պետրոնեվիչ։ Կայսրը ընդունեց դեսպանի հաւատարմագիրները և երկար խօսակցութիւն ունեցաւ նրա հետ։ Այնուհետև կայսրը խորհրդակցեց արտաքին գործերի մինիստրի հետ ու ընդունեց ռուսաց դեսպան Սաբուրովին։ Դեսպանի և կայսրի խօսակցութիւնը իշխան Միլանի ճանապարհորդութեան նպատակի մասին էր։ Աւստրո-Ունգարիայի և Գերմանիայի մէջ եղած գաղտնի դաշնագրութեան հիման վրա Գերմանիան պէտք է ճանաչէր Սերբիայի թագաւորութիւնը, քանի որ Աւստրիան տուել էր իր համաձայնութիւնը։ Այդ պատճառով կայսրը կամենում էր իմանալ ռուսաց կառավարութեան կարծիքը, որ հետևում է անկախ քաղաքականութեան Բալկանեան ժողովրդների վերաբերութեամբ։ Վաճառականների և արհեստաւորների ժողովը յունիսի 17-ին կը քննէ ապագայ աշխարհանդէսի նախագիծը, որ լինելու է Բերլինի մէջ 1885 թուականին։ Այդ ժողովին կը մասնակցեն քաղաքային խորհրդի անդամներ, կայսերական պարլամենտի և պրուսական սէյմի պատգամաւորները։

ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ ալբանցիները դիմել են մեծ պետութիւնների ներկայացուցիչներին մի խնդրագրով, որի բովանդակութիւնը հետևեալն է։ Ալբանական ժողովուրդը միշտ ազատ է եղել, իսկ վերջին ժամանակները ալբանցիներով բնակեցրած մի քանի նահանգներ անցել են օտար պետութիւնների ձեռքը և Ալբանիայի ազատութեանը վտանգ է սպառնում։ Ոչ մի ալբանցի չէ կարող հանդիսատ մնալ, նկատի առնելով այդ վտանգը։ Երկար մտածելուց յետոյ ալբանական ժողովուրդը իր ապագայի ապահովութեան համար անհրաժեշտ է համարում հետևեալ պայմանները։ 1) Ալբանցիներին, իբրև Եւրոպայի մէջ ապրող քաղաքականութեան համար ընդունակ ժողովրդին, իրաւունք տալ հայրենիքը, կրօնը և պատիւը պաշտպանելու համար. 2) որոշել նրանց յարաբերութիւնները սուլթանի հետ և յայտնել նրանց ինքնավարութիւն ունեցող հպատակներ. 3) միացնել ալբանցիներով բնակեցրած չորս վիլայեթները և նրանց ալբանական նահանգ անուանել։ Այնուհետև խնդրագրի մէջ ասված է, որ ալբանցիները վաղուց աշխատում են միացնել իրանց երկիրը և ինքնավարութիւն ստանալ, բայց նրանց աշխատանքները ապարդիւն են անցնում և նրանց դրութիւնը ատելիաբար վատանում է։ Թիւրքաց կառավարութիւնը նրանց օրինաւոր պահանջները ապստամբութիւն է համարում և նրանց դէմ ուղարկել է Դերվիշ-փաշային։ Ալբանցիները խնդրում են եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներին իրանց վրա ուշադրութիւն դարձնել և պաշտպանել նրանց ազգային իրաւունքները։ Խնդրագրի վերջը ասված է. «Մենք վկայում ենք, որ վերոյիշեալ կէտերից աւելի մենք ոչինչ պահանջներ չունենք։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բերլին, 14 յունիսի

Այսօրվայ նամակովս կը հաղորդեմ ընթերցողին միմանցից անկախ լուրեր։

Նորերումս հաւաքվել էր այստեղ գերմանական աշխարհագրական ժողովը։ Ես թէև աշխարհագրական ընկերութեան անդամ եմ, շատ զբաղված լինելով, չը կարողացայ ամբողջ երկու օր հետևել ժամանակս այդ ժողովներին և նստերին, բայց վերջին օրը գնացի և առիթ ունեցայ ծանօթանալ մի քանի շատ յայտնի մարդկանց հետ, որոնց թւում նաև Հալլէի համալսարանի պրոֆէսոր Ա. Կիրխհոֆի հետ, որի անունը յիշված էր «Թիւրքաց հայերի դրութիւնը» դասախօսութեան մէջ Անիի աւերակների մասին նրա ասած խօսքերի պատճառով։ Ես պատմեցի նրան, որ ես էլ նրա յօդուածից մի անգամ մի քաղուածք արեցի հայոց լրագիրների համար և նա շատ ցաւվեց որ հայերէն չը գիտէ, որպէս զի կարողանայ կարդալ հայոց լրագիրները։ Երբ ինձ նրան ներկայացրին, նա ազգանունս լսելով յանկարծ բացականչեց «Ein Armenier! also wirklichein ächter Armenier» (մի հայ!ն, ուրեմն մի իսկական հայ!ն եմ տեսնում)։ Այսպեղի աշխարհագրական ընկերութիւնը բոլոր ընկերութիւններից ամենահետաքրքիրներից մէկն է և նրա թէ նիստերի ժամանակ, թէ նիստերից յետոյ, նոյն իսկ ընթրիքի ժամանակ կարելի է հանդիպել ամենանշանաւոր և ամենաբազմատեսակ շրջանների մարդկերանց։ Մարդը շատ բան կարող է սովորել յաճախելով այս ընկերութեան նիստերը։

Մի երկու շաբաթ առաջ բացվեցաւ առաջին էլէկտրական երկաթուղին Բերլինից ոչ հեռու։ Զայանի Վէրնէր Զիմէնս (Werner Simens), որ և կովկասեցիներին անյայտ չէ թէ իր պղնձէ հանքերի գործարանների, թէ հեղկական հեռագրի շինութեան պատճառով, իրագործեց այդ իր վաղուցվայ միտքը տանելով էլէկտրական մի երկաթուղի Lichterfelde (Լիխտէրֆէլդէ) երկաթուղու կայարանից մինչև Լիխտէրֆէլդէի զինուորական ուսումնարանը։ Լիխտերֆէլդէ 1/4 ժամ հեռու է Բերլինից երկաթուղով և այնտեղ է գտնվում Պրուսիայի գլխաւոր զինուորական դպրոցը։ Տարածութիւնը որի վրա կառուցված է էլէկտրական երկաթուղին 3 կիլոմէտր է (մօտաւորապէս երեք վերստ) իսկ արագութիւնը, որով ընթանում է էլէկտրական կառախումբը՝ ժամը 20 կիլոմէտր է։ Առժամանակ դեռ չեն կամենում աւելի մեծ արագութեամբ թողնել կառքերը։ Այսօր լսեցի, որ Զիմէնս դիտաւորութիւն ունի յանձն առնել էլէկտրականութեամբ շարժել Սան-Գոտհարդի ստորերկրեայ անցքի (tunnel) երկաթուղու գնացքները։ Ես դեռ չը կարողացայ գնալ Լիխտէրֆէլդէ, որպէս զի տեսնեմ աշխարհիս մէջ առաջին անգամ կառուցված էլէկտրական երկաթուղին, բայց երբ այցելած կը լինեմ, անպատճառ իմ ապաւորութեանս մասին տեղեկութիւն կը տամ «Մշակին»։

Էլէկտրականութիւնը վերջին երկու տարվայ ընթացքում այնքան առաջադիմութիւն է արել ժամանակակից կեանքի այլ և այլ ճիւղերի գործադրութեան մէջ, որ նրան անչուշտ նշանաւոր ապագայ կարելի է գուշակել մարդկութեան քաղաքակրթութեան ասպարիզում։ Թէլէֆոնները այնքան ընդարձակութիւն են ստանում, որ օրինակ Շտոկհոլմի մէջ նրանք ընդհանրապէս մոցրած են։ Ամեն տեղ այդ քաղաքի պաշտօնատներում գլխաւորները իրանց աշխատելու սենեակից յարակցութիւն ունեն թէլէֆոնի միջնորդութեամբ իրանց մասնաւոր բնակարանների հետ։ Իր պաշտօնատան մէջ նստած մի մարդ հաղորդում է, դիցուք իր կնոջը, որ այսօր, շատ զբաղմունքների պատճառով, պիտի ուշանայ ճաշին, կամ մի տեղ կութիւն է պահանջում իր տանից և այլն։ Պակաս չեն և հանդէսներ, որ պատմում են թէլէֆոնի առիթով։ Մի պարոն, օրինակ իր գրասենեակից հարցնում է իր կնոջից թէլէֆոնի միջոցով. «Ist es dir recht wenn ich heute Herrn A. zu Tisch mitbringe» (արդեօք ընդդէմ չես լինի, եթէ ես այսօր պ. Ա.-ին մեզ մօտ ճաշին հրաւիրեմ)։ Կինը, չմտանելով որ պ. Ա. նոյն րոպէին իր մարդու կողքին է կանգնած, պատասխանում է իր բնակարանից «Nein, lass doch lieber den alten Esel fort» (ոչ, աւելի լաւ է արձակիր պառաւ էշին)։ Կարելի է երևակայել պ. Ա-ի դրութիւնը որ տիկնոջից իր մասին այդ տեսակ շողոքորթական կարծիք է լսում թէլէֆոնի շնորհով....

Ամերիկայի Միացեալ Նահանգներում այնքան սովորական է թէլէֆոնը, որ շատ բնակարաններ կապված են օրինակի համար մսավաճառի, հացթուխի հետ, մի առանձին թէլէֆոն կայ դէպի զրասենեակը, որտեղ հաւաքվում են կոմիսիոնէրները և այլն, և այլն։ Այսպիսով, մի քայլ չանելով տանից դուրս, կարելի է, առանց սովորական շատ ծառաներ էլ ունենալու, ամեն տեսակ յանձնարարութիւններ տալ։ Թէլէֆոնի թելերը իսկապէս սամն բնակարանից գնում են դռնապանի մօտ և պահանջին համեմատ հարկաւոր է միայն դռնապանին, նամանաւանդ թէլէֆոնի օգնութեամբ ասել՝ «կապեցէք իմ թէլէֆոնը մսավաճառի հետ» և այլն։

Դարձեալ մի լուր։ Բերլինի ձիաքաշ երկաթուղիները, որոնք շատ բազմացել են այժմ, ահագին վատատակ ունեն։ Շատերը, որոնք սովոր էին տոմս ման գալու, առաւօտը դէպի իրանց գործը գնալով, կամ գործից տուն վերադառնալով, այժմ երկաթուղով են կատարում իրանց երթևեկութիւնը շատ էժան գնով, (1/4 ժամ մօտաւորապէս արժէ 3 կոպէկ)։ Այդպիսով շատ ժամանակ են խնայում։ Բայց չը նայելով այդ էժանութեանը, երկաթուղու վարչութիւնը այնու ամենայնիւ մեծ գումարներ է վատատկում, որովհետև բոլոր գծերի վրա իւրաքանչիւր 4 կամ 5 րոպէից յետոյ մի կառք է գնում։ Նորերումս, Համբարձման տօնի օրը, ձիաքաշ երկաթուղու ընկերութիւնը վատատակեց 38,000 մարկ, ուրեմն մի օրվայ մէջ 19,000 բուբլ։

Անդրէաս Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից որ Թիւրքաց Հայաստանը դարձեալ մի սարսափելի տառապանքին է ենթարկվել։ Վանի կողմերի 34 գիւղերը քանդված են երկրաշարժից։ Անգլիական հիւպատոսը գնացել է տեղի վրա կարօտեալներին օգնութիւն հասցնելու համար։

—«Presse» լրագիրը հաղորդում է որ անգլիական կառավարութիւնը դիմել է Լօնդոնի ռուսաց դեսպանին խնդրելով նրան ներկայացնել անգլիական մինիստրութեանը Ռուսաստանում ապրող օտարազգաց հրէաների մասին ռուսաց օրէնքների պատճէնը։

—Լրագիրները հաղորդում են որ իշխան Բիսմարկ սաստիկ հիւանդ է։ Այժմ, երբ ամբողջ Գերմանիան պատրաստվում է պարլամենտական նոր ընտրութիւններին, Բիսմարկի հիւանդութիւնը շատ նպաստաւոր չի լինի պահպանողական կուսակցութեան աջողութեանը առաջիկայ ընտրութիւնների մէջ։

—Ֆրանսիական «La Citoyenne» լրագիրը, որ հրատարակում է տիկին Իւբէրտին Օկլէրի, հաղորդում է որ Նորերումս գումարվեցաւ Փարիզում ֆրանսիական կանանց մի մեծ ժողով, որով կայացաւ կանանց իրաւունքների ընկերութեան ընդհանուր ժողովը։ Այդ ընկերութեան անդամուհիները կամենում են ներկայացնել իրանց կանդիդատին եկող ընտրութիւններին։ Ժողովը պահանջում է որ քաղաքային խորհրդի պաշտօնների մէջ կանայք էլ իրաւունք ունենան մասնակցել։ Տիկինները ուղարկեցին մի նամակ Տալանդիէ պատգամաւորին և ուրիշ պատգամաւորներին, հարցնելով նրանց արդեօք պատկանում են նրանք կանանց քաղաքական իրաւունքների կուսակիցներին։ Պ. Տալանդիէ պատասխանել է որ իր կարծիքով իւրաքանչիւր ֆրանսիացի, ինչ սեռին և պատկանէր նա, պէտք է հաւասար քաղաքական իրաւունքներ վայելի ֆրանսիական հանրապետութեան մէջ։

—Լօնդոնում կայացել է բանւորների մի ժողով։ Ժողովը հետեւեալ որոշումն է արել։ որովհետև բանւորները ամենից շատ հարկ են վճարում պետութեանը, բայց չունեն իրաւունք իրանց դասակարգի ներկայացուցիչներն ունենալ պարլամենտում, այդ պատճառով խնդիրք ներկայացնել կառավարութեանը որ պարլամենտական դալու ընտրութիւնների մէջ անգլիական բանւորներն էլ իրաւունք ունենան ընտրել իրանց ներկայացուցիչներին պարլամենտի մէջ։

—Անգլիական կանայք Նորերումս ժողով են կայացրել Լօնդոնում, որտեղ վճռվեցաւ խնդիրք ներկայացնել պարլամենտին, որ կանանց էլ թոյլ տրվի քաղաքական ընտրութիւններին մասնակցելու։

—Մայրաքաղաքի ռուս լրագիրներին հեռագրում են Լօնդոնից որ յուլիսի 2-ին կը կայանայ Լօնդոնում միջազգային սոցիալ յեղափոխականների կոնգրէս։

—Կ. Պոլսից հեռագրում են որ այդտեղի ռուսաց դեսպան Նելիդով ուղեորվում է Օդեսա։

—Իտալական նաւատորմի մի մաս ուղեորվում է դէպի Սալոնիկի, միւսը դէպի Զմիւռնիա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի։ Պաշտօնապէս հաղորդում են. Լեհական գործերի մասին նշանակված մասնաժողովը ոչնչացրած է։ Քննութենից երևաց, որ Եկատերինոսլաւյա ջրանցքի մէջ ապրիլի 6-ին գտնված ռումբերը անցեալ ամառն են դրված։ Կիևի մէջ բռնված քահանայի աղջիկ Անոնա Վասիլիէվնա Եակիմովա մատնացուցել է Հանգուցեալ Կայսրի կեանքի դէմ արած փորձին Ալէքսանդրովսկի մօտ և մարտի 1-ի եղեռնագործութեանը, գեղջկուհի Կոբզեվայի անունով ապրելով Սարգոյայա փողոցի վրա, որտեղ ական էր շինված։ Դոնի զօրքերի ատաման Կրասնօկուտսկի արձակված է ծառայութենից հիւանդութեան պատճառով։ Գլխաւոր իշխան Սվեատոպոլկ Միրսկի երկրորդը նշանակված է Դոնի զօրքերի ատաման։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ Զերնոգորիայի իշխանուհին ատացաւ Եկատերինայի ժապաւէն և ատող շքանշանները առաջին կարգի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ